

## Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### ՀՀ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԲԵԼԳԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

#### 1. Անունը, ազգանունը

Արևիկ Անափիոսյան

#### 2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի տեղակալ

#### 3. Գործուղման վայրը և ժամկետները

Բրյուսել, 20-22 նոյեմբերի, 2019 թվական

#### 4. Հրավիրող կողմը

ԵՄ հետազոտությունների և նորարարությունների գլխավոր տնօրինություն

#### 5. Գործուղման նպատակը (աշխատանքային, որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն ԵՄ - Հայաստան հետազոտությունների և նորարարությունների համատեղ հանձնաժողովի առաջին նիստին

#### 6. Քննարկված թեմաները

- 1) ԵՄ Հորիզոն 2020 ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության ընթացքը, խնդիրները և դրանց լուծմանն ուղղված քայլերը,
- 2) ԵՄ Հորիզոն 2020 ծրագրին մասնակցության աջակցության ազգային մեխանիզմները,
- 3) ԵՄ Հորիզոն 2020 ծրագրին մասնակցության համար ֆինանսական պարտավորությունների կատարման ընթացքը,
- 4) ԵՄ Հորիզոն 2020 ծրագրին Հայաստանի Հանրապետության մասնակցության պայմանների վերանայման հարցը,
- 5) Հորիզոն-Եվրոպա հաջորդ շրջանակային ծրագրին Հայաստանի մասնակցության հնարավորության հարցը:

#### 7. Հանդիպումները, ելույթները, քարձրացված կամ քննարկված հարցերը

Ներկայացվել է ԵՄ Հորիզոն 2020 ծրագրին Հայաստանի մասնակցության ընդհանուր նկարագիրը, ֆինանսական պարտավորությունների հարցը, առկա խնդիրները և դրանց լուծմանն ուղղված քայլերը: Մանրամասն ներկայացվել է ԵՄ Հորիզոն 2020 ծրագրին Հայաստանի մասնակցության 2019-2020թթ. ֆինանսական պարտավորությունների կատարման ընթացքի և պլանավորման հարցերը: Մասնավորապես եվրոպական կողմին ներկայացվել է տեղեկատվություն ֆինանսական պարտավորությունների կատարման դժվարությունների մասին և ներկայացվել են այն քայլերը, որոնք հայաստանյան կողմը ձեռնարկում է խնդիրները լուծելու ուղղությամբ: Քննարկվել է նաև Հորիզոն-Եվրոպա ԵՄ հաջորդ շրջանակային ծրագրին ասոցացված անդամակցության պայմանների հարցը:

Ներկայացվել է ԵՄ Հորիզոն 2020 ծրագրին Հայաստանի մասնակցության աշխատանքների համակարգումը և Քաղաքականության աջակցության գործիքի շրջանակներում <<Հատուկ աջակցություն Հայաստանին>> ծրագրի կատարումը ապահովող միջոցառումների ընթացքը: Մասնավորապես, ներկայացվել են ԵՄ Հորիզոն 2020 ծրագրին հայաստանյան գիտական կազմակերպությունների և բուհերի մասնակցության ընթացքի մասին վիճակագրական տվյալները, մասնակցության խրախուսման մեխանիզմները (Ազգային կոնտակտային անձանց և Հորիզոն 2020-ի ծրագրային կոմիտեների մասնակիցների ցանցերի ձևավորումը, Բոնուս-Հորիզոն-2020 նախաձեռնությունը և այլն), ներկայացվել են այն խնդիրները, որոնք խոչընդոտում են ծրագրին առավել արդյունավետ մասնակցելուն և այդ խնդիրների լուծմանն ուղղված քայլերը: Քննարկվել են նաև <<Հատուկ աջակցություն Հայաստանին>> ծրագրի շրջանակում պատրաստված միջանկյալ զեկույցի դրույթները:

Ներկայացվել է Քաղաքականության աջակցության գործիքի շրջանակներում <<Հատուկ աջակցություն Հայաստանին>> ծրագրի ընթացքի մասին տեղեկատվությունը, ինչպես նաև քննարկման է դրվել առաջարկությունների փաթեթ, որը նախագծվել է ՀՀ գիտության կոմիտեի կողմից գիտական կազմակերպությունների գնահատման և ֆինանսավորման արդյունավետության

բարձրացման մեխանիզմների ներդրման նպատակով, ինչը և «Հատուկ աջակցություն Հայաստանին» ծրագրի թիրախային կետերից մեկն է:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Ձեռք են բերվել պայմանավորվածություններ առ այն, որ Եվրոպական կողմը կպատրաստի և հայկական կողմին կտրամադրի ԵՄ Հորիզոն 2020 ծրագրին Հայաստանի մասնակցության մասին համապարփակ զեկույց, իսկ հայկական կողմը Հորիզոն 2020-ին մասնակցության 2019 թվականի տարեկան վարձավճարի չվճարած մասը կփոխանցի մինչև այս տարեվերջ, իսկ 2020 թվականի համար կձեռնարկի այնպիսի քայլեր, որոնք հնարավորություն կտան ֆինանսական պարտավորությունները ժամանակին կատարել: Որոշվել է Հորիզոն-Եվրոպա ԵՄ հաջորդ շրջանակային ծրագրին Հայաստանի ասոցացված անդամակցության հարցին անդրադառնալ այն ժամանակ, երբ Եվրոպական կողմը կհաստատի այդպիսի անդամակցության ձևի և պայմանների վերաբերյալ վերջնական պայմանները:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Որոշվել է, որ հայաստանյան կողմը Հորիզոն 2020 ծրագրին մասնակցության 2019 թվականի տարեկան վարձավճարի չվճարած մասը կփոխանցի դեկտեմբեր ամսվա ընթացքում: Եվրոպական կողմը մինչև տարեվերջ հայաստանյան կողմին կտրամադրի Հորիզոն 2020 ծրագրին Հայաստանի մասնակցության մասին զեկույց:

10. Ստորագրություններ, ամսաթիվը

25.11.2019թ.

 Recoverable Signature

X 

ԱՐԵՎԻԿ ԱՆԱՓԻՈՍՅԱՆ

Signed by: ANAPIOSYAN AREVIK 6905860212